

ներում՝ կարող ենք տեղեկութիւններ գտնել նաև մեր եկեղեցու անցեալ կանոնական սովորոյթի կարգերի մասին։ Արդի ժողովների կանոնները կը գտնենք ժողովական պաշտօնական արձանագրութիւններում, իսկ արդի սովորոյթին կը ծանօթանանք թէ՛ եկեղեցական ատեանների և օրդանների պաշտօնական գրագրութիւններից, թէ՛ մամուլից և թէ՛ հարցուփորձի միջոցով։

Այս բոլոր ձևական աղբիւրների մատակարարած նիւթը պէտք է ուսումնասիրուի իրաւաբանօրէն, զտուի, մշակուի, որպէս զի հայոց եկեղեցու կանոնական իրաւունքը պարզորոշ ձև ստանայ և կարողանայ պատշաճաւոր կերպով գործադրուիլ՝ մեր եկեղեցու կեանքը կարգաւորելու համար։ Այդ ուսումնասիրութիւնը հայոց եկեղեցական իրաւաբանութեան գործն է։

Սիրական Տիգրանեան



Հայոց ժամակարգութիւնները հինգերորդ դարում.

ժամագրքի բարգմանութիւն. ժամակարգութիւն.

Գիրք Աղօթից. Աղօթամատոյց եւ ժամագիրք։

Չորրորդ դարում, մեր քաղաքական իշխանութեան ժամանակ, երբ դեռ Հայոց լեզուով ու գրով գրել կարդալ չկար, — «Զի յայնժամ գիր . . . Հայոց չեւ ևս էր լեալ» (Խոր. Գ. լգ.), և Հայոցս աշխարհի մի մասին այն ինչ տիրում էր Պարսիկը, իսկ միւս մասին հզօր Յոյնը (Կորիւն. Խոր. Գ. խբ.), այն մասը, որ գտնւում էր Յունաց բաժնի վերայ և վիճակուած էր Կեսարիայի մեծ աթոռին, նոցա մանուկները կը թւում, մարդու՝ էին «Յունական դպրութեամբ և ոչ Ասորւով» (Խոր. Գ. ծղ.), և հետեւապէս այս բաժնի հայերը կատարում էին իրենց ժամակարգութիւնները Յունարէն լեզուով, — «Յունականաւն վարէին եկեղեցւոյ կարգ» (Խոր. Գ. լգ.):

Իսկ այն մասը, որ Պարսից իշխանութեան լծի տակ էր, իւր Եկեղեցւոյ սրբազան կարգերն ու արարողութիւններն էլ կատարում էր Ասորեոց կոշտ, խեցրեկ լեզուով — «Պաշտօն եկեղեցւոյ և կարգացմունք գրոց Ասորի ուսմամբ վարէին ի վանօրայս և յեկեղեցիս Հայաստան ժողովրդոցս» (Ղազար Փարպ. ժ): Վասն զի Պարսից պետութիւնից մեր աշխարհի վերայ կարգուած պարսիկ վերակացուները, իրենց մասի վերայ գտնուող հայերից ոչ մէկին թոյլ չէին տալիս որ Յունարէն գրել կարգաւ սովորեն, այլ բռնադատում էին որ սովորեն միայն Ասորերէն, — «Ի բաժանել զաշխարհս Հայոց, չտային պարսիկ վերակացունքն Յոյն ուսանել դպրութիւն ումեք յիւրեանց մասինն, այլ միայն Ասորի» (Խոր. Գ. ծգ.):

Իսկ երբ այս անհամ բռնութիւնները չկար ոչ Պարսից և ոչ հոգւով պարսկացած մեր տնաւեր Մեհրուժանի կողմից, որ այս ժամանակ հրամայում էր ամեն ոքի կատարաբար, — «Մի ուսանել զդպրութիւն յունարէն, այլ պարսիկ մի՛ որ իշխեսցէ յոյն խօսել կամ թարգմանել» (Խոր. Գ. լզ.): և որ աւելի ցաւալին է, Հայոցս հաղորդութիւնն ու ծանօթութիւնը Յոյներից իսպառ կտրելու համար, ահա թէ ինչ արեց այս խիզախ և բարբարոս հայը, — «Ի Մեհրուժանայ այրեալ լինելին ընդհանուր աշխարհիս Յոյն գիրք: Զի մի՛ ամենեւին լիցի Հայոց ընդ Յունաց ծանօթութիւն և հաղորդութիւն սիրոյ» (Խոր. Գ. ծգ. լզ.): Եւ այս ամենը այս փառամոլ և հաւատաւրաց հայը անում էր ինչ բանի համար, — «Շապուհ . . խոստացաւ տալ նմա զՀայոց թագաւորութիւնն» (Խոր. Գ. լզ.): Այո՛, երբ այս անհամ ճնշումներն ու պառակտումները չկար, մեր աշխարհի այս խաղաղ և անլրդով ժամանակն էլ, ամեն տեղ բնակուող մեր հայ ժողովուրդը կատարել է իւր Եկեղեցւոյ պաշտամունքները տեղ որ Ասորերէն, տեղ որ Յունարէն լեզուներով. — «Ի տեղեաց տեղեաց սահմանացն Հայոց տայր հրաման թագաւորն Տրդատ . . յաշխարհաց և ի դաւառաց բազմութիւն մանկրտւոյ ածել յարուեստ դպրութեան . . և զնոսա յերկուս բաժանեալ, զոմանս յԱսորի դպրութիւն կարգեալ և զոմանս

ի Հելլէն (յոյն), որ և անդէն յական թօթափել . . աւետարանաժառանգ լինէին» (Ազատ.):

(Հայոցս աշխարհի այս մեծ բաժանումը եղաւ՝ միաժամանակ զահակալող Հայոց Արշակ Գ-ի և Խոսրով Գ-ի ժամանակ, և Սահակ Պարթևից յառաջ մեր Ասպուրակէս կաթողիկոսի ժամանակ, Փրկչական իբր384 թուին (Խոր. Գ. խր. խա):

Արդ՝ նախ քան Սուրբ Գրոց թարգմանութիւնը, սրբոյն Սահակայ և Մեսրոփայ աստուածսիրութեամբ և հայրենասիրութեամբ թէժացած սրտերը շտկալով այն դառն նեղութեանց, ինչ որ աստուածային բաների մատակարարութեանց ժամանակ չարաչար կրում էին իրենք և իրենց հետ ոչ պակաս ժողովուրդը. կրում էին այս երկու գերաշխարհիկ Հովիւները, որովհետև եկեղեցւոյ մէջ ինչ կարդացմունք որ սահմանուած էին, նոքա ի լուր ժողովրդեան այդ ամենը բարձր ձայնով կարդալէն յետոյ, ապա նոցա կենդանարար նիւթն ու իմաստը իրենց հաւատաւոր ունկնդիրներին հոգւոյ և սրտի մէջ քամելու համար, դառնում և քարոզի ձևով անձանձրոյթ թարգմանում, մեկնում էին. և այս պաշտօնը առաւելապէս ամեն տեղ կատարում էր սուրբն Մեսրոփը, վասն զի ըստ բանի սրբոյն Սահակայ, նա էր «Աստուծոյ ճշդոյ աշխարհի» (Խոր. Գ. Ժէ. Թուղթ Սահակայ առ Ատափկոս):

Բայց և այնպէս այս երանելի վարդապետը պակաս նեղութիւններ չէր քաշում. որովհետև ինքն էր համ կարդացողը, համ թարգմանողը. և եթէ մի ուրիշը Գիրքը կարդում էր, և ինքն այնտեղ չէր պատահում, կարդացուածը գաղտնիք էր մնում ժողովրդից, — «Ոչ փոքր կրէր վտանգս, քանզի ինքն էր ընթերցող և թարգմանիչ, և եթէ այլ ոք ընթերցոյր, ուր նա ոչ հանդիպէր, զանխուլ ի ժողովրդոցն լինէր» (Խոր. Գ. խէ.):

Եկեղեցական դասից աւելի՝ ինչպէս ասացինք, նեղութիւն էր կրում և ժողովուրդը. վասն զի երբ նոքա միմիայն Աստուծոյ սուրբ պատուիրանները և օրէնքները լսելու և կատարելու՝ լիքը, բուռն ըղձով յաճախում էին եկեղեցի, ուր և ծուարած ծառացած, մինչդեռ այդ օրէնքներն ու պատուիրանները լսում էին Յոյն և Ասորի իրենց անդիտելի

լեզուներով, ժողովրդեան հոգեսիրութեան և նորա այս բարեպաշտական ցոյցերին քաջ տեղեակ և ականջալուր Ղազար Փարպեցին բացականչում է որ,— «Ոչինչ էին կարող լսել և օգտիլ . . . յանկրութենէ (անհասկանալի) լեզուին Ասորւոյ» (Փարպ. ժ.) . և որ աւելի ցաւալին է, նորա Եկեղեցւոյ այս ահաւոր խորհուրդների կատարմանց ժամանակ, խռոված հոգւով, պղտորուած սրտով և դա՛ւի դատարկ թողնում դուրս էին գալիս Եկեղեցուց .— «Բազմութիւնք ժողովրդոց ունայնք և թափուրք հրաժարեալք գնային Եկեղեցւոյն» (Փարպ. ժ.) :

Այսպէս էլ, կրկնում ենք, եթէ Եկեղեցւոյ մէջ կարդալիք բաները բացատրող, մեկնող չէր լինում, կամ եթէ բացակայում էր ինքն քաջավարժ թարգմանիչն Մեսրոփը, ամենայն ինչ մնում էր ժողովրդից իրրեւ ամանի տակ ծածկուած մի բան, — «Զանխուլ ի ժողովրդոցն լինէր», վշտահար սրտով ասում է Խորենացին, և ահա ժողովուրդը աւելի այս բանի համար էր հոգւով արորւում, սրտով մոռնալու :

Իսկ այս երկու լեզուների ուսման և դպրութեան ընդհանուր ժողովրդեան կատարեալ կերպով տեղեակ չլինելը, ժամանակին թէ որչափ անմեղ հոգիներ զրկել է աստուածային գիտութեան լոյսից, և ի զուր և ի նանիր կործանել տգիտութեան խորխորատ, նանրահաւաստութիւն, անտիապաշտութիւն, և եղծել ապականել նոցա բարքն ու վարքը, այս մասին Փարպեցու և Խորենացու մեզ տուած տխուր տեղեկութիւններից, աւելի ևս տխուր և սրտաճմլիկ են և Բիւզանդիներ. Որոնք տեղեակ էին Յոյն և Ասորի ուսման, — «Որք զհանդամանս գիտէին հելլէն կամ ասորի դպրութեան», ասում է Բիւզանդ, փոքր ի շատէ հասկանում էին մի բան, — «Հասու ինչ այնմ փոքր ի շատէ» . Իսկ որոնք զրել կարդալ չգիտէին — «Իսկ որք արասալոյ քան զգիտութիւն արուեստին էին խառնադանձ բազմութիւն մարդկան», այսպիսիների վերայ եթէ իրենց վարդապետները գիշեր ու ցերեկ յորդահոս անձրևների նման թափում էին իրենց քարոյները, այնու ամենայնիւ այդ քարոյներից և ոչ մի բան, և ոչ կէս բան, և ոչ մի բանի փոքր յիշատակ չէին կարողա-

նուժ նոքա իրենց մոքներում պահել. — «Եթէ դցայդ և զցերեկ նստեալ վարդապետացն և ըստ նմանութեան ամպոցն իբրև զհեղեղ ինչ անձրեաց սաստկութիւն զվարդապետութիւնն ի վերայ հոսէին, ոչ ոք ի նոցանէն և ոչ մի ոչ, և ոչ մի բան, և ոչ կէս բանի, և ոչ դոյզն յիշատակ ինչ, և ոչ նշմարանս ինչ զոր լսէինն՝ և ոչ կարէին ինչ ունել ի մօտ: Վասն զի միայն իւրեանց ընդ անպիտանս, ընդ անօգուտս և եթ զբօսեալ էին» (Բիւզ. Գ. Ժգ.):

Հինգերորդ դարում եկեղեցական պաշտամունքների թարգմանութեանց կամ բացատրութեանց ժամանակ, ճիշտ սոյնօրինակ ցուրտ ցոյցերով էր վերաբերւում ժողովուրդը նոյնպէս դէպի իրեն ուսուցող պաշտօնեայն, և զժկամակութեամբ երես թեքում նրանից. և ըստ Բիւզանդի ասենք, «Ոչ մի բան, և ոչ կէս բանի» քաղցր յիշատակ չէր ընկնում ու մնում նոցա սրտի և մոքի արդանդի մէջ: Ահա թէ այդ ժողովրդասէր ուսուցիչների այս մասին կրած անդուլ ջանքերը, նոցա սրտի յուզմունքն ու հոգւոյ տազնապը ինչպէս է ամօթով պատկերացնում մեզ Փարպեցին, շատ բան դադանիք պահելով. — «Եւ ուսուցիչքն հանելով յոգւոց և հառաչելով՝ զզջանային զսնտի ջանն իւրեանց» (Փարպ. Ժ.):

Սակայն եթէ լաւապէս ուշ կդարձնենք մենք չորրորդ և հինգերորդ դարերի պատմութեանց, մենք կտեսնենք որ, եթէ այսպիսի դէպքերում մեր հայ ժողովուրդը քամահել, անարգել է իւր Եկեղեցւոյ պաշտօնեային, չի լսել նրան, հեռացել խորթացել է Եկեղեցւոց. այո՛, այս ծանր և աստուածընդդէմ մեղքերը է՛ որ ահամայ և է՛ որ կամաւ եթէ նա գործել է, գործել է նա միմիայն հայրենասիրութիւնից ու եկեղեցասիրութիւնից շարժուած ու դրդուած, քան թէ առ իւր Եկեղեցին ու նորա եկեղեցականները ունեցած ատելութիւնից. վասն զի ինչպէս տեսանք մեր մէջ բերած տեղեկութիւններից, պարզապէս նոքա չէին սիրում այն, ինչ որ օտար լեզուով ու բարբառով կատարւում էր իրենց հայ ծամբում, և մի և նոյն ժամանակ թարգմանաբար մատակարարւում իրենց. ապա թէ ոչ Հայոցս ազգի տարեգրութեանց մէջ մենք ո՞ր դարում կարող ենք գտնել մի ժողովուրդ, որ այնպէս սերտ սիրով

Թխսած լինէր իւր Եկեղեցւոյ անդաստանի վերայ, որպիսին մենք տեսնում ենք Հինգերորդ դարում:

Այսպէս ահա սուրբն Սահակ և Մեսրոպ աչքի առաջ ունենալով նախնի դարուց և իրենց օրերում պատահած ժողովրդեան տգիտութեան քսամների վիճակը, ևս և, Աւետարանի անմահ հացով ժողովուրդ պահելու, ժողովուրդ կրթելու իրենց կրած հանապազօրեայ դեգերանքը, և իրենց մաքուր հոգւոյ աչքով չափելով, որ դռեհիկ ժողովրդեան ուշ ու միտքն իւր մայրենի Եկեղեցուց և իւր ազգութիւնից օտարացնողն՝ և Բիւզանդի պէս ասենք, «Ընդ անպիտանս և ընդ անօգուտս» թերթոյն ու ծռողը միմիայն Յոյն և Ասորի լեզուէն, ու նրանցից ծաւալած ուսմունքն է պատճառ, որոց մէկին՝ Ասորուէն, մեծ գանգատանքով Փարպեցին կոչում է «Ասորական աստուծոյ», իսկ այդ լեզուէն իրենց մանուկներին սովորեցնել տալու մասին, ժողովրդեան ցնցխած «Մէջալան Զախէրն» ու տքնութիւններն զուր ջանք և անօգուտ վատտակ, որի վերայ ինքն Մեսրոպ մինչև իսկ հայրապէս լաց եղաւ, — «Տրտմէր երանելի այրն . . փղձկեալ յանձն իւր» (Փարպ. Ժ.):

Ուստի Ազգիս այս երկու մեծ Հովիւները, ի սէր իրենց խնամքին յանձնուած ժողովրդեան մտաւոր շինութեան և մշակութեան, ի սէր նորա հոգեկան խաղաղութեան, ի սէր նորա հոգու մաքրութեան՝ առ Աստուծոյ, նորա սրտի սրբութեան՝ առ Կրօն, նորա սիրոյ աճելութեան՝ առ Ազգ և Եկեղեցի, Հայոցս նշանագրերը մեծ տառապանքով կարգի բերելուց յետոյ, այլ իմն հոգեվառ ցանկութեամբ ձեռնամուխ եղան Սուրբ Գրոց Թարգմանութեան և Թարգմանեցին, որոց համագումար եղբայրութիւնը Կորիւնը կոչում է «Եկեղեցական Գրոց Թարգմանութիւն»:

Անշուշտ այս «Եկեղեցական Գրոց Թարգմանութեան» հետ, սուրբն Սահակ և Մեսրոպ, կամ ո՛ր գիտէ, Ասորի և Յոյն դպրութեանց տեղեակ իրենց աշակերտները, Թարգմանեցին և մեր եկեղեցական պաշտամունքները, որոց համագումար եղբայրական ժողովը՝ Ութերորդ դարում Յոհան Օձնեցի հայրապետը մի անունով կոչում է «Ժամակարգութիւն» . — «Իսկ

Ժամակարգութիւնն որ ի սմա (եկեղեցում)» (Յոհ. Իմ. 1833. վ.ա. 142). Տասներեքերորդ դարում, մեծն Վանական վարդապետ կոչում է «Գլխ. Աղբիւն» — «Գիրք աղաւթից, զոր արարեալ է սուրբ Հարցն Սահակայ[յ] և Մեսրոբայ[յ], (Ինքնաձեռագիր ճառընտիր պատմագիր Մխիթար Այրիվանեցւոյ 944. թղ 74^բ). Տասներեքերորդ դարում, Գէորգ Սկեռացու աշակերտ և Ժամակարգութեան մեկնիչ Երզնկացի Մովսէս վարդապետը կոչում է «Աղբիւնապոյց» — «Աւերք ուրեք զոր տեսանեն զի Սաղմոսարան կամ Աղաւթամատոյց ընթեռնուն, զարմանալով ասեն . . վասն էր գրովքդ վարժիս» (2. Մեկ. Ժամ. 172. թղ 71^բ). այսպէս էլ Մխիթար Այրիվանեցին. — «Աշոթամատոյցն Սահակայ և Մեսրոբայ» (Պատ. Մխ. Այր. 1867 Պետ. 34). Տասնհինգերորդ դարում, Հայոց 212 (1487) թուին գրած մի Տօնացոյց կոչում է «Ժամագլխ» — «Եւ ընթեռնուն զգրեալսն ի Ժամագիրքն» (2. Շարական 1587. թղ 422^ա):

Բայց թէ ո՞ր լեզուից թարգմանեցին Ժամագիրքը, Ասորէնից թէ Յունարէնից. և թէ, այս երկու ազգերի մէջ եղած Ժամագիրքը նիւթով և բովանդակութեամբ միօրինակ բան էր, թէ տարբեր:

Այս և սոցա նման բաների լուծումը թողնելով մեզանից աւելի զիտակ անձերին, այս խնդրի համար առ այժմ մենք կարող ենք միայն այս ասել, որ Յոյն դպրութեան սիրահար երջանկայիշատակ սուրբն Սահակ և Մեսրոպը կամ նոցա աշակերտները, ինչպէս երևում է մեր արդի Ժամագրքի մի քանի մասերից՝ թարգմանել են Յունարէնից. որի մէջ մաս են խառնել մինչև իսկ տիեզերական ժողովներ, և վաստակել նոցա վերայ Յոյն եկեղեցւոյ նշանաւոր հայրերից ոմանք, մինչդեռ այսպիսի ակնյայտնի վաստակներ չեն տեսնում նորա մէջ Ասորւոց եկեղեցւոյ կողմից:

Յունաց և մեր եկեղեցական պատմութեան աւելի քաջածանօթ Ներսէս Լաւրերօնացին, մեր եկեղեցւոյ և նորա պաշտօնէից կազմակերպութիւնը առանց ազգասիրարար հայ հանձարի ստեղծագործութեան տալու, նա տալիս է Յունաց՝ ասելով, որ Հայք ի սկզբանէ անտի «ի յունաց զամե-

նայն բարեձևութիւն եկեղեցւոյ ընկալան և ուսան . . նոցա գրովք և աւանդութեամբ պայծառացեալ» (Զ. Քննութիւն Կարգաց Եկեղ. 329. թղ 86^բ):

Եւ արդարեւ թէ, Հայք՝ իւր ժամանակին, Յունաց սուրբ հարց գրքերովն են սնուել և համարել նոցա իրենց մօքի մշակութեան աղբիւր. իւր ժամանակին, թէ Հայք նոցա բարեշէն դպրոցներից են քաղել իմաստութիւն և գիտութիւն. և այս ուսումնատենչ հայերից, յիշեալ Թարգմանչացս աշակերտք—Յովսէփ, Եղնիկ, Ղևոնդ, Կորիւն մինչ անգամ «Առանց հրամանի վարդապետաց իւրեանց» գնացին ու մտան այդ դպրոցները (Խոր. Գ. Կ. Կորիւն). թէ, Հայք՝ իւր ժամանակին, նոցա մէջ գումարուած ժողովներից են փնջել եկեղեցական, կրօնական, և ընտանեկան վայելուչ օրէնքներ. իւր ժամանակին, թէ, Հայք նոցա վանքերից են գաղափարել անապատական կեանքի չքնաղ կարգ ու կանոններ, և այս ամենը մեծ փութով առել ու ծրկուել Յունաստանից Հայաստան, և իրենց բերածներով, զարգարել մեր զրականութիւնը, մեր եկեղեցին, մեր վանքերը, այս մասին շատերից քիչն ասենք:

Փարպեցին ասում է իւր համար. Ես կարողութեանս չափ պարապելով յունական ուսմամբ, իմ տկարամտութեանս ներածին չափ կարգացել եմ այս սուրբ մարդոց գրքերը,—Աթանասի, Կիւրեղի, Կիւրեղ Երուսաղէմացու, Բարսեղի, Գրիգոր աստուածաբանի և մեր բաղմաչարչար Լուսաւորչի՝ Հայոցս վարդապետի գիրքը.—«Իմ ըստ կարի պարապեալ յունական ուսմանցն, և ըստ զօրելոյ տկարամտութեանս իմոյ կարգացեալ զգիրս արանցն սրբոց . . զսրբոցն ասեմ զԱթանասէ Աղէքսանդրացւոյ, զԿիւրղէ Աղէքսանդրացւոյ, և զԿիւրղէ Երուսաղէմացւոյ և զԳրիգորէ Նազաղացւոյ, որ . . աստուածաբան յորջորջեցաւ. և զմերոյն առաքելանման նահատակին Գրիգորի՝ զվարդապետէն Հայոց» (Թուղթ Ղաղ. 1891 Վտ. 657):

(Հայոցս վարդապետի այս գիրքը, որի անունը ծածուկ է պահել Փարպեցին, Ութերորդ դարում մեծն Ստեփաննոս Սիւնեցի կոչում է «*Մանրագրոս*».— «Զնոյն և սուրբն Գրի-

գոր յեղյեղու[ի] մանրապատումն» (2. Մեկ. ժամ. 1454. թղ 10^բ), որին այժմ կոչում ենք Յաճախապատում: Բառս թերևս ստեղծել են մեր նախնիք Ագաթանգեղոսի այս խօսքերից, — «Ապա . . սկսեալ երանելոյն Գրիգորի ի ճառս յաճախագոյնս, գծուարապատումն»: «Սկսեալ երանելոյն Մաշթոցի ճառս յաճախագոյնս, դիւրապատումն» (Կորիւն. 1894 Վտ. 34): Իբրև գրքի անուն, բառս Յաճախապատում զբանում ենք ժ. Գրգ դարում գրուած մի անցման երկաթագիր ճառքների մէջ՝ այսպէս. — «Երանելոյն սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի և մեծ խոստողի Քրիստոսի աւագեալ յաղաքս պահոց Յաճախապատում գրոց». — «Եւ քանզի ամենայն կարգաց չափ եղեալ է. .» (2. ճառքնա. 130. թղ 120^բ):

Գիւտ կաթուղիկոսն ասում է Պերոզի դռան առաջ. Իմ գիտութիւնը և իմ աստուածաբանական ուսմունքը Յունաց աշխարհումն եմ սովորել. — «Զգպրութիւն գիտութեանս և զիմաստ բանաւոր ուսմանց յաշխարհին Հռոմոց ուսեալ եմ. և են իմ անդ ծանօթք բաղում և ուսումնակիցք» (Փարպ. կղ.):

Փարպեցին ասում է սուրբ Սահակի համար. Իւր շատ լիուլի Յոյն ուսումով և կրթութեամբ գերազանցում էր Յունաց շատ գիտուններից. — «Յոյժ առլցեալ անցուցանէր վարժիւք զբաղում գիտնովք Յունաց» (Փարպ. ժ.):

Կորիւնն ասում է սուրբ Մեսրոպի համար. Մանկութեան հասակում կրթուած էր Յոյն ուսումով. — «Ի մանկութեան տիսն վարժեալ Հելլենական գպրութեամբն»:

Կորիւնն ասում է իւր և իւր յիշեալ ընկերների համար, երբ դառնում են Բիւզանդիայից (Վ. Պօլիս). Աստուածաշունչ և Յունաց սուրբ հարց հոգեշահ գրքերով, Նիկիայի և Եփեսոսի ժողովների կանոններով եկան երեւեցան Հայոց աշխարհին. — «Աստուածատուր գրոցն և բաղում շնորհագիր հարց . . և Նիկիական և Եփեսոսական կանոնօք գային երեւլով աշխարհին Հայոց»:

Խորենացին ասում է սուրբ Սահակի համար. Այդադար սաղմոսերգութեամբ պարապող երեւելի վանքերի ծրգնաւորների նման ունեցաւ 60 աշակերտ. կատարեալ ծրգ-

նաւոր մարդիկ,—կոշտ մաղեղէն հազնո՞ղ, ներքին հանդերձի վրայից՝ երկաթէ թելից հիւսած հագուստ հազնո՞ղ, ոտաբոբիկ ման եկո՞ղ, որոնք միշտ ման էին գալիս նորա հետ.—«Ստացաւ աշակերտս վաթսուն ըստ նմանութեան մայրաքաղաքացն (մեծ վանք) սպուդէից, արք կրօնաւորք, խարազնաղգեստք, երկաթապատք, բոկազնացք, որ յար ընդ նմա շրջէին» (Խոր. Գ. խթ.):

Իսկ ինչ է ասում Խորենացին Մեծին Ներսէսի համար, երբ հայրենասէր հայրապետս շտապ տազնապաւ Բիւզանդիայից Կեսարիա և Կեսարիայից բուն Հայաստան դառնալով, ուր և, երբ գտնում է մեր Եկեղեցիներում և Եկեղեցուց դուրս ամեն բան խաթարեալ, խանգարեալ, ինչ է անում, — «Զբարեկարգութիւնն, զոր ետես ի Յունաց աշխարհին, մանաւանդ ի թագաւորեալ քաղաքն (Բիւզանդիա), իսմա նկարագրէ» (Խոր. Գ. ի.):

Արդ՝ մեր տօնելի Հարց ըղձակերտ սրտով Յունաց ուսմանց ու դպրութեանց այսպիսի տաք տաք կպչելն ու դիպչելը աչքի առաջ ունենալով, ի նկատի ունենալով և միանգամայն Լամբրօնացուց շատ յառաջ Յունաստանի մասին գրած Խորենացու և այս անկեղծ խոստովանութիւնը, — Բոլոր Յունաստանին չեմ քաշուիլ զխտութեանց մայր և դայեակ անուանել,— «Զբոլոր իսկ զՅոյնս ոչ դանդաղիմ մայր և դայեակ ասել իմաստից» (Խոր. Ա. բ.), մենք կարծում ենք որ Լամբրօնացին ուղիղ է ասում, թէ Հայք «Ի Յունաց զամենայն բարեձեւութիւն եկեղեցւոյ ընկալան և ուսան»:

Զենք ժխտում նոյնպէս, որ Ասորիք ևս Յունաց հետ զուգընթաց ունեցել են իրենց եկեղեցւոյ արժանայիշատակ հայրերը: Գիտենք նոյնպէս որ այս հին ազգը ունէր և իւր երկու երևելի քաղաքները և բարձրագոյն ուսումնատեղիքը, և ըստ Կորիւնի «Առաջինն Եդեսիայ (Ուռուհայ) կոչի, և երկրորդն Ամիդ (Տիարպէքիր)», որոց «աշակերտասէրն» Մեսրոպբայցելելով, և ըստ նոյն Կորիւնի, — «Դաս մի մանկուոյ հրամանաւ արքայի (Վռամշապհոյ)» տանելով իւր հետ, «Զոմանս յասորի դպրութիւնն կարգէր, և զոմանս յունական դպրութիւն»:

Գիտենք նոյնպէս որ Եդեսիան է եղել Ասորւոց սուրբ հարց գործերի միակ անքոյթ ապաստարանը. և Սահակն ու Մեսրոփը միայն այս քաղաքն ուղարկեցին իրենց ասորագէտ Յովսէփ և Եզնիկ աշակերտներին՝ պատուիրելով, — «Զի որ միանգամ գտցի անդ գիրք՝ ասացեալ նոցին սրբոց հարցն առաջնոց, թարգմանեալ ի մեր լեզուս, բերցեն փութով» (Խոր. Գ. կ. Կորիւն): Իսկ ըստ իմ տկար հայեցողութեան, թերևս Հայաստանցիք այս քաղաքն էին ուղարկում և իրենց մանուկներն ի կրթութիւն, որոց գնալու և անօգուտ կերպով չարչարուելու ողբալի նկարագիրը այսպէս է տալիս մեզ Փարպեցին, — «Բազում թռչակօք և հեռագնաց ճանապարհօք և բազմաժամանակեայ դեգերմամբ մաշէին զաւուրս իւրեանց ի դպրոցս Ասորի գիտութեան» (Փարպ. կ.):

Այո, այս ամենը ճշմարիտ է, կիսոստովանուենք որ Ասորիք ժիր, եռանդուն և ուսումնասէր ժողովուրդք էին, և Յունաց նման ունէին իրենց բարեշէն դպրոցները: Սակայն նոցա Եդեսիայի և Ամիգի դպրոցները, մեր և ընդհանուր քրիստոնէից համար չեն տուել երբէք սրտաշարժ Պատարագամատոյց և Աղօթամատոյց գրքեր, այլ այս գրքերը բերել են լոյս աշխարհ Կեսարիայի, Բիւզանդիայի, Աթէնքի և Աղէքսանդրիայի անուանի դպրոցները, ուր մարզուեցին Իդնաթոսներ, Բարսեղներ, Ոսկեբերաններ, Աթանասներ, Կիւրեղներ և Գրիգորներ, և գրեցին այդ գրքերը, որոց թերևս մեծ անունից, ու հզօր ու մատաղ գրչից ընկճուելով մերս Սահակ և Մեսրոփը, մեր ժամագիրքն էլ թարգմանեցին Յոյն լեզուից:

Զմոռանանք ասել նոյնպէս, որ Սահակ և Մեսրոփի ժամանակ թերևս Ասորիք այնքան տկար, գրական վաստակներից և նշանաւոր մարդիկներից զուրկ մի ազգ էին, որ մինչև անգամ Բիւզանդիայի ինքնակալ Թէոդոսը (փոքրը) և Ատալիկոս եպիսկոպոսը մեծ թոնթորանքով մեղադրում են մեր սուրբ Սահակին, երբ այս երանելի հայրապետը մեր Վառժապուհ արքայի և Մեսրոփի հետ, Վառժապուհի ցուցմամբ մեր նշանագրերը ձեռք բերելու բուռն յուսով՝ միայն Ասորւոց էին ապաւինել, և միայն նոցա աշխարհի հողն էին արո-

բռնւմ ոտօք ու մտօք: Ահա յիշեալ ինքնակալի և եպիսկոպոսի յարեւմտեան թոնթորանաց գրերն առ Սահակ. Շատ մեղադրեցինք քեզ, ասում է թաղաւորը, և աւելի այս բանի մէջ մեղադրեցինք, որ դու արհամարհելով մեր ճարտասանները, որոնք գտնւում են քաղաքիս մէջ, ոմանց Ասորիներէց էիր կամենում ձեռք բերել գիտութեանց վերաբերեալ գիւտեր. — «Մեղադրեցաք յոյժ. . . եւ առաւել յայսմ մեղադիր եմք, զի արհամարհեալ զճարտարօքս, որ ի մերում քաղաքիս, յԱսորւոց ոմանց խնդրէիր զիմաստից գիւտս»: Ասում է եպիսկոպոսը. Մեղադրանքից ազատ չենք թողնիլ քեզ, որ յառաջօրէն չյիշեցիր քո երանելի հայրերի՝ Լուսաւորչի և Մեծին Ներսէսի, դէպի մեր ազգն ունեցած սէրն ու բարեկամութիւնը: Եւ աւելի այս բանի վերայ ենք զարմանում, թէ ի՞նչպէս թողեցիր՝ եկեղեցւոյ աղբիւր մեր հայր սուրբ Յովհաննէսին, որ ոչ միայն աշխարհաբումար մայրաքաղաքս, այլ և քաղաքիս ձեռքով բոլոր քրիստոնեայք և ընդհանուր աշխարհ Նրանից աշակերտուելով՝ սովորում է. ուստի և այս պատճառաւ Ուիլ Էլիան կանչեցին Նբան, իսկ դուք զանցառութեան տալով Նրան, կամեցաք անձրեւաջրերով ձեր փափագի ծարաւը կոտրել, կշտացնել. — «Ազատ ի մեղադրանաց ոչ թողումք, որ ոչ կանխաւ յիշատակեցեր զսիրելութիւն Գրիգորի և Ներսիսի երանելեաց քոց հարց: Եւ առաւել ընդ այս զարմանամք, թէ զիմարդ թողեր զաղբիւրն եկեղեցւոյ՝ զհայր մեր սուրբ Յովհաննէս, որ ոչ միայն տիեզերական մայրաքաղաքիս, այլ սովաւ և ամենայն քրիստոնեայք և ընդհանուր աշխարհ ի նմանէ վարդապետեալ ուսանի, ուստի և Ոսկի բերան կոչեցին զնա: Եւ ձեր զանց զնովաւ արարեալ, կամեցայք ի սահանական ջրոց զփափագ ծարաւոյն յաղեցուցանել» (Խոր. Գ. Ծէ.): (Փառաւոր թերեւս Պապալ՝ = ծարաւից յոյժ ծարաւ. պապակիլ. խորովիլ. «Մի կուշտ ջուր խմեցի, պապակս կոտրեցի». «Լեզուս պապակուել է (ծարաւից). Օչականցի»: «Առաքեա զՂաղարոս, զի թացեէ զծագ մատին իւրոյ ի ջուր և զովացուցէ զլեզու իմ, զի պապակիմ ի ատպոյ աստի» Ղուկ. Ժզ. 24.):

Եւ եթէ մեր եկեղեցական Հարք՝ ըստ Գիւտ կաթու-

ղիկոսի մինչև անգամ իրենց կրօնաւորական հագուստներն առան օծնաստանից, և ի պահանջել հարկին բերել էին տալիս այդ համբաւատենչ աշխարհից — «Զկերպարան հանդերձիցս զոր ունիմքս մեք անտի գնեմք, վասն զի և ոչ յայլ աշխարհի գտանի» (Փարպ. կդ.). արդ՝ մեր եկեղեցական սուրբ Հարցս համար, որ կուզեմ ասել սուրբ Սահակի և Մեսրոպի համար ի՞նչ մի ամօթալի բան էր, որ Յունաց եկեղեցուց փոխ առնէին կամ թարգմանէին մի ժամագիրք, որի ձևն ու ձայնը առաջին անգամ ի տղայ տիոց տեսան ու լսեցին Աղգիս երկու մեծ լուսաւորիչները, սուրբն Գրիգոր՝ որ «Սնանէր և ուսանէր ի կեսարիա» (Աղաթ), և Սահակ Պարթևիս հայրը Մեծն Ներսէս՝ «Որ ի կեսարիա էր ի հրահանգս» — ի կրթութեան (Խոր. Գ. Ժգ.):

Զմոռանալք ասել նոյնպէս, որ Լուսաւորչից մինչև Մեսրոպի, Աղգիս որդւոց կրթութեան առաջին ուսումնաւ տեղիքն էին միմիայն կեսարիա և Բիւզանդիա, և շատ սաւկաւ Աթէնք, և այս շատ յառաջ:

Ուրեմն եթէ սուրբ Սահակը՝ ըստ Փարպեցու, Յունաց շատ գիտուններից իւր ուսումով և կրթութեամբ գերազանցում էր, — «Անցուցանէր վարժիւք զբազում զիտնովք Յունաց», եթէ սուրբն Մեսրոպը՝ ըստ Կորիւնի, քաջաւարժ, կրթուած էր Յոյն ուսումով, — «Վարժեալ հելլենական զըպրութեամբ», կնշանակէ որ Սահակն ու Մեսրոպը իրենց այս ուսմունքն ու կրթութիւնը ստացել էին սուրբ Լուսաւորչի և Մեծն Ներսէսի կրթուած տեղում, կեսարիայում՝ որ հաւանական է, կամ թէ Բիւզանդիայում՝ որ շատ հաւանական չէ. վասն զի Բիւզանդիան աւելի յետոյ մեր Աղգի որդւոց կրթութեան արձակ ուսումնաւայր եղաւ: Սակայն նայելով մեր ճշմարտապատում Խորենացուն, Մեսրոպը — «Սնեալ և ուսեալ [էր] առ մեծին Ներսիսի», և այս թերեւս այն ժամանակ, երբ երանելի հայրապետս իրրեւ անպղտոր և վճիա ջրեր սիրող մի մրտիմն (թռչուն), Այրարատից սուրալով սուղուելով վանքս յանապատս զիւղս և քաղաքս, նոցա վարուց և բարուց և աստուածային պաշտամանց մէջ ունեցած պղտորութիւններն էր զիտում և հոգ տանում (Բիւզ. Գ. Ժգ. Խոր.

Գ.Ի.) : (Մարտի 28 Բառի Համար ԳԻՐԲ ԹՂԹՈՅՐ ունի այս ծանօթութիւնը. «Այսպէս յօրինակին» . 1901 ԹիՖ. 486 : Բառս գործ են ածում Օշկիշէ. Աշքիշէ. — «Էնքան լողացանք, ջրի մրտիմ դարձանք») :

Եւ այսպէս Սահակն ու Մեսրոպը, Լուսաւորչի և Ներսէսի պէս ի տղայ տիոց եթէ տեսան ու լսեցին Կեսարիայի կամ Բիւզանդիայի՝ այս երկու Աշքեպիսկոպոսական բարձր Աթոռների պաշտած ժամակարգութիւնները, անհաւատալի է որ նոքա իրենց ծեր և սարարտ հասակի մէջ աչք փակելով՝ անարգէին, քամահէին այդ մեծ Աթոռների մէջ՝ հարանց առ հայր յաջորդաբար անաղարտ մնացած ժամագիրքը, և հետեւապէս Յունացն ի մի կողմ ծալեալ, ճգնէին թարգմանել Ասորերէնից :

Բայց և այնպէս, այսպէս ասենք, թէ Հայք՝ Ասորւոց կամ Յունաց ժամագրքից ի՞նչ ընկալան և ուսան : Այս բանը ուղիղ հասկանալու համար, ընթերցողին օրինակով հասկացնենք .

Եթէ մենք աներկիւղաբար մի կողմէ՛ մարդի (բիրտ) համարձակութիւն և իշխանութիւն տանք, և պատուիրենք նրան գէթ մի բոպէ, որ մեր արդի բարեձև ժամագրքի միջից անխնայաբար քանցէ, քաշէ ու հանէ միայն մեր նախնեաց հրաշալի գրուածքները, և անհրաշալի բան համարելով, դէն դնէ նրանց իբրև մի անպիտան և ֆլասակար դաղձ (բոյս), կտեսնենք որ ժամագիրք կոչուած Յունաց կամ Ասորւոց այս հին Մատեանը ոչ այլ ինչ է եղել, եթէ ոչ ընդարձակ սաղմոսների և մի քանի աղօթքների մի լերկ ու մերկ մի պատկեր, որին մեր Կողբացի գիտուն Եզնիկը ամենայն բարեպաշտական և աստուածսիրական դիտումով այսպէս է ներկայացնում մեզ . Մեր լեզուները սաղմոս քաղելուց, երգելուց, փայտ են կտրել—անղգայացել են . — «Լեզուք մեր ընդարմացեալ [են] ի սաղմոսերգութենէ, զոր Աստուած խնդրէ՛ զայն ոչ ունիմք . . շրթամբք սիրեմք զԱստուած» (Խրատք Եզնկայ) :

Արդ՝ ի՞նչ էր մնում անել մեր բազմերախտ Թարգմանիչներին, — սրբոյն Սահակայ և Մեսրոպայ, որ իրենց այս

գրգած ու գգուած ժամագրքը իւր նախկին անփառունակ վիճակից վերանար ի գերագոյն վիճակ. ահա՛ այս. — իրրեւ թանկագին պերճանք սիրող մի դշտոյ, շքեղազարդել պաճուճել նորա գծուծ և լերկ պատկերը, և թափել նորա վերայ առատապէս ամենայն աստուածային գեղ և վայելչութիւն, որպէս զի ժամագրքիս պայծառ տեսութիւնից ամեն ոք ընդարմանայ, զգածուի, շիւնայ, զմայլի և առանց տեղի և մտքի խլրտման կամ շարժման, միշտ առ Աստուած ձգուած պահէ նրանով իւր կատարելիք անհատ աղօթքն ու բարեբանութիւնը:

Եւ արդարեւ որպէս Սահակ և Մեսրոփ, այսպէս և երկու մեծ Հայրերիս այս երկնաւոր փափագանաց՝ ցանկութեամբ, մտքով և սրտով կամակից մեր եկեղեցւոյ շատ հայեր, տունին ժամագրքիս իւր վայելչութիւնը, տունին ժամագրքիս իւր պայծառութիւնը, փշեցին նորա երեսին շունչ կենդանի տեղալով առատապէս այդ պէրանք սիրող Թագուհու գլխին իրենց թանկագին մարգարիտներն ու զարդերը, — իրենց խնկելի Աղօթքներն ու Քարոզները, որոց մեծադին լինել ցոյց տալն այստեղ, իմ գրչից գուրս է:

Սահակ Վարդապետ Ամասունի



ԵԿԵՂԵՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ

Նորին ս. Օծութեան ազգիս Վեհափառ Հայրապետի ի Մայր Աթոռ զանուելու պատճառաւ Նոր տարուայ, Ծննդեան և Յովհաննու Մկրտչի ծննդեան տօները սովորականէն աւելի շքեղութեամբ կատարուեցան:

Յունուար 1-ի առաւօտ ժամերգութենէն զկնի ըստ սո-